Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-468-13.12.2022-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է մի շարք լրացումներ և փոփոխություններ Օրենք 1-ին հոդվածում, ուստի կարծում ենք, որ օրենքի 1-ին հոդվածն անհրաժեշտ է ներկայացնել նոր խմբագրությամբ:	Ընդունվել է Նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ. «1. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության հավատարմագրման ազգային համակարգի գործունեության կանոնները և կանոնակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության հավատարմագրման	Ընդունվել է

				ազգային մարմնի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) և հավատարմագրված կամ հավատարմագրմանը հավակնող Հայաստանի Հանրապետության կամ այլ երկրների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց (համապատասխանության գնահատման մարմիններ, այսուհետ՝ ՀԳՄ) հարաբերությունները: 2. Սույն օրենքը կարգավորում է համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացը՝ անկախ հավատարմագրման և համապատասխանության գնահատման պարտադիր կամ կամավոր հիմքերից:»:	

2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում «Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում. 1)-ին և 2)-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.» բառերը փոխարինել «Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝» բառերով:	Ընդունվել է Հաշվի առնելով Օրենքի 2-րդ հոդվածում կատարվող փոփոխությունների և լրացումների քանակը և ծավալը՝ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ: Նախագծի 3-րդ հոդվածը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝»:	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված 1)-ին և 8)-րդ կետեր	Նախագծի 3-րդ հոդվածի 1)-ին կետում «համապատասխանության գնահատման մարմինը (այսուհետ՝ ՀԳՄ)» բառերը փոխարինել «ՀԳՄ-ն» հապավմամբ:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Նախագծի 3-րդ հոդվածի 1)-ին և 8)-րդ կետերում «համապատասխանության գնահատման մարմին» բառերը փոխարինվել են «ՀԳՄ-ն» հապավմամբ	Ընդունվել է

				(հապավումը նախատեսվում է ամբողջ տեքստում) :	
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված 2)-րդ կետ և 25)-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 2)-րդ կետում «Հավատարմագրման ազգային մարմին» բառերը փոխարինել «ԱՐՄՆԱԲ» հապավմամբ և հանել ». կետադրական նշանները:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Նախագծի 3-րդ հոդվածի 2)-րդ կետում և Նախագծի 3-րդ հոդվածի նոր 28)-րդ կետում «Հավատարմագրման ազգային մարմին» բառերը փոխարինվել են «ԱՐՄՆԱԲ» հապավմամբ (հապավումը նախատեսվում է ամբողջ տեքստում) և հանվել են ». կետադրական նշանները:	Ընդունվել է
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի նոր 3)-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկվել է հանել «2) 4)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.» բառերը և « չակերտ կետադրական նշանը:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ՝ Նախագծի 3-րդ հոդվածը լրացվել է նոր 3-րդ կետով հետևյալ խմբագրությամբ. «3) հավատարմագրման	Ընդունվել է

				վկայագիր՝ պաշտոնական փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ, որը հավաստում է հավատարմագրումը որոշակի ոլորտում.»:	
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 4)-րդ կետ	Առաջարկվել է հանել » չակերտ կետադրական նշանը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ հանվել է չակերտ կետադրական նշանը:	Ընդունվել է
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի նոր 5)-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածում առաջարկվել է հանել «3) 6)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.» բառերը և « չակերտ կետադրական նշանը:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ. Նախագծի 3-րդ հոդվածը լրացվել է նոր 5-րդ կետով հետևյալ խմբագրությամբ. «5) հավատարմագրման նշան՝ ԱՐՄՆԱԲ-ի կողմից համապատասխանության գնահատման մարմնին տրված նշան՝ հավատարմագրված լինելը ցուցադրելու	Ընդունվել է

				նպատակով օգտագործելու համար.»:	
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի նոր 6)-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ կետում «կարգավիճակի» բառից հետո առաջարկվել է լրացնել «(կասեցում, դադարեցում, մերժում, կրճատում)» բառերը, իսկ »: կետադրական նշանը փոխարինել . կետադրական նշանով:	Ընդունվել է Նախագծի 3-րդ հոդվածի նոր 6)-րդ կետով նախատեսված որոշումների շրջանակը հստակեցնելու նպատակով, ինչպես նաև իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից «կարգավիճակի» բառից հետո լրացվել է «(կասեցում, դադարեցում, մերժում, կրճատում)» բառերը, իսկ »: կետադրական նշանը փոխարինվել է . կետադրական նշանով:	Ընդունվել է
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի նոր 7)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «**4) 7)-րդ կետում «գործընթացին,» բառից հետո լրացնել «ծառայությանը,» բառը:** **5) 8)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «** » բառերը:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ և հիմք ընդունելով «ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 Համապատասխանության գնահատում. Արտադրանքի, գործընթացների և ծառայությունների	Ընդունվել է

				սերտիֆիկացման մարմիններին ներկայացվող պահանջներ» ստանդարտի պահանջը (համապատասխանության գնահատումը ներառում է նաև ծառայության եզրույթը)՝ Նախագծի 3-րդ հոդվածը լրացվել է նոր 7-րդ կետով:	
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի նոր 8-րդ կետ	Առաջարկվել է հասկացություններում սահմանել նաև «համապատասխանության գնահատման գործունեություն» հասկացությունը:	Ընդունվել է Նախագծի 3-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսվել է «համապատասխանության գնահատման գործունեություն» հասկացության սահմանումը. «8) համապատասխանության գնահատման գործունեություն՝ ՀԳՄ-ի կողմից համապատասխանության գնահատման գործընթացի ժամանակ իրականացվող գործունեություն.»	Ընդունվել է

11.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 9)-րդ և 10)-րդ կետեր	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «**6) 9)-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:** **7) 10)-րդ և 12)-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «** » բառերը: Բացի այդ առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի 9-րդ կետում՝ ՀԳՄ հասկացության սահմանման մեջ լրացնել «(ներառյալ՝ պետական մարմնի կազմում գործող փորձարկման լաբորատորիա)» բառերը, հաշվի առնելով այն, որ բացի մասնավոր ընկերությունների, պետական մարմինների կազմում գործող փորձարկման լաբորատորիաները ևս հանդիսանում են համապատասխանության գնահատման մարմին:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի կետերի համարակալումները փոփոխվել են: Միաժամանակ ՀԳՄ հասկացության մեջ լրացվել են «(ներառյալ՝ պետական մարմնի կազմում գործող փորձարկման լաբորատորիա)» բառերը:	Ընդունվել է
12.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 11)-րդ կետ	Առաջարկվել է հանել ». չակերտ և կետ կետադրական նշանները:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի 10)-րդ կետից հանվել են կետադրական նշանները:	Ընդունվել է

13.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 12)-րդ և 13)-րդ կետեր	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր 12)-րդ և 13)-րդ կետերով:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ և հիմքընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով ու ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 «Համապատասխանության գնահատում. Համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրում իրականացնող հավատարմագրման մարմիններին ներկայացվող պահանջներ» ստանդարտով սահմանված պահանջները (այսուհետ՝ ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018)՝ Նախագծի 3-րդ հոդվածը լրացվել է նոր 11)-րդ և 12)-րդ կետերով հետևյալ խմբագրությամբ. «12) շահագրգիռ կողմեր՝ հավատարմագրմամբ ուղղակիորեն կամ	Ընդունվել է

				անուղղակիորեն շահագրգիռ կողմեր: Ուղղակիորեն շահագրգիռ են համարվում նրանք, ովքեր հավատարմագրվում են, անուղղակիորեն շահագրգիռ՝ նրանք, ովքեր օգտվում են հավատարմագրված համապատասխանության գնահատման ծառայություններից կամ հիմնվում են դրանց վրա. 13) հավատարմագրման կրճատում՝ հավատարմագրման ոլորտի որոշակի մասի դադարեցում.»:	
14.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 13)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «13)-րդ կետում «դադարեցման գործընթաց» բառերը փոխարինել «դադարեցում» բառով:», «9) 14)-րդ և 15)-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « » բառերը:	Ընդունվել է Տեխնիկական բնույթի վրիպակի հիման վրա «դադարեցման գործընթաց» բառերը փոխարինվել են «դադարեցում» բառով: Բացի այդ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները՝	Ընդունվել է

				Նախագծի 3-րդ հոդվածի կետերի համարակալումները փոփոխվել են:	
15.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի նոր 15)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի 15)-րդ և 18)-րդ կետերից հանել »: կետադրական նշանը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի նոր 15)-րդ կետից հանվել է »: կետադրական նշանները:	Ընդունվել է
16.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 16)-րդ և 17)-րդ կետեր	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «**10) 16)-րդ կետում «գնահատման» բառից հետո լրացնել «ենթակա» բառը:** **11) 18)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.** « » բառերը և նույն հոդվածը լրացնել նոր 16)-րդ և 17)-րդ կետերով:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «գնահատման» բառից հետո լրացվել է «ենթակա» բառը և հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ՝ Նախագծի 3-րդ հոդվածը լրացվել է նոր 16)-րդ և 17)-րդ կետերով հետևյալ խմբագրությամբ. «16) փորձարկում՝ ընթացակարգի	Ընդունվել է

				համաձայն համապատասխանության գնահատման ենթակա օբյեկտի մեկ կամ մի քանի բնութագրերի որոշում. 17) տրամաչափարկում՝ գործողություն, որը հատուկ պայմաններում նախ կապ է ստեղծում չափանմուշների (էտալոնների) միջոցով ստացված չափման անորոշություններով մեծության արժեքների և չափման անորոշություններով համապատասխան ցուցմունքների միջև, ապա օգտագործում է այդ տեղեկությունը ցուցմունքից չափման արդյունք ստանալու նպատակով կապ ստեղծելու համար.»:	
17.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 19)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «**12) 19)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «** » բառերը:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ՝ Նախագծի 3-րդ հոդվածի կետերի	Ընդունվել է

				հարակալումները փոփոխվել են:	
18.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 20)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի «**13)-րդ կետում «** » բառերը փոխարինել «20) հավատարմագրման փորձագետ (գնահատող)՝ հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ռեեստրում գրանցված ֆիզիկական անձ, որին ԱՐՄՆԱԲ-ը» բառերով, հանել « **» բառից հետո լրացնել «** » բառերը, իսկ « **» բառերը:** » բառը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմնի գնահատում իրականացնելու համար.» բառերով:	Ընդունվել է Նախագծի 3-րդ հոդվածի նոր 20)-րդ կետ. Հիմք ընդունելով ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 ստանդարտի պահանջը՝ հավատարմագրման փորձագետ (գնահատող) հասկացությունը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «20) հավատարմագրման փորձագետ (գնահատող)՝ հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ռեեստրում գրանցված ֆիզիկական անձ, որին ԱՐՄՆԱԲ-ը նշանակել է միայնակ կամ որպես գնահատման խմբի անդամ համապատասխանության գնահատման մարմնի գնահատում իրականացնելու համար.»	Ընդունվել է

19.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 21)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «**14) 21)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «** » բառերը:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ՝ Նախագծի 3-րդ հոդվածի կետերի համարակալումները փոփոխվել են:	Ընդունվել է
20.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 21)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի 21)-րդ կետում «կամ» բառից հետո լրացնել «մասնագիտական» բառը և հանել »: կետադրական նշանը:	Ընդունվել է Նախագծի 3-րդ հոդվածի նոր 21)-րդ կետ Հիմք ընդունելով ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 ստանդարտի պահանջը՝ տեխնիկական փորձագետ հասկացության մեջ լրացվել է մասնագիտական բառը և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ հստակեցվել է կետադրական նշանը:	Ընդունվել է
21.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 22)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «21)-րդ կետից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր՝ 21. 1)-րդ կետ. «21.1» բառերը և փոխարինել 22 թվով:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ և հիմք ընդունելով	Ընդունվել է

				«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի կետերի հարակալումները փոփոխվել են:	
22.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 22)-րդ կետ	Նախագծի 3-րդ հոդվածի 22)-րդ կետից հանել «և (կամ)),» շաղկապները:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 16-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի նոր 22)-րդ կետից հանվել է «և (կամ)),» շաղկապները:	Ընդունվել է
23.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 22)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի 15)-րդ կետում «գործընթաց» բառից հետո հանել .» կետադրական նշանը և փոխարինել «, այդ թվում՝ ՀԳՄ-ի գործունեությանը հետևում.» բառերով:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շտկվել է կետադրական նշանի մասով փոփոխությունը և հաշվի առնելով ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 ստանդարտի պահանջը՝ գնահատումը ներառում է նաև ՀԳՄ-ի	Ընդունվել է

				գործունեությանը հետևումը: Նախագծի 3-րդ հոդվածի նոր 22)-րդ կետ	
24.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 23)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի 22-րդ կետում « **16) 22)-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «22** » բառերը փոխարինել «23» թվով: Նույն կետում «կողմից» բառից հետո լրացնել «հավատարմագրված ՀԳՄ-ի» բառերը, ինչպես նաև հանել «, որը հիմք է հանդիսանում համապատասխանության վերաբերյալ հայտարարության վավերականության/գործողության ժամկետի պահպանման համար.»:» բառերը և դնել . կետադրական նշանը:	Ընդունվել է ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000-2012 «Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ» ստանդարտի պահանջներին համապատասխան վերանայվել է պարբերական գնահատում հասկացությունը: Նախագծի 3-րդ հոդվածի նոր 23)-րդ կետը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «22) պարբերական գնահատում՝ ԱՐՄՆԱԲ-ի կողմից հավատարմագրված ՀԳՄ-ի համապատասխանության գնահատման գործունեության պարբերաբար հետևում.»:	Ընդունվել է

25.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 24)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «**17) 22)-րդ կետից հետո լրացնել նոր 22.1)-րդ և 22.2)-րդ կետեր՝ հետևյալ խմբագրությամբ. «** » բառերը:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Օրենքի 2-րդ հոդվածը Նախագծով շարադրվել է նոր խմբագրությամբ, Նախագծի 3-րդ հոդվածի կետերը փոփոխվել են:	Ընդունվել է
26.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 24)-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի 24)-րդ կետում «որը» բառից հետո հանել «համաձայն հավատարմագրման կարգի» բառերը և »: կետադրական նշանը:	Ընդունվել է Հաշվի առնելով ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 ստանդարտի պահանջը՝ արտահերթ գնահատում հասկացությունից հանվել է «համաձայն հավատարմագրման կարգի» բառերը: Նախագծի 3-րդ հոդվածի նոր 24)-րդ կետ	Ընդունվել է
27.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 24-րդ և 25)-րդ կետեր	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի 24-րդ և 25)-րդ կետերից հանել »: կետադրական նշանը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի նոր 24)-րդ և 25)-րդ կետերից հանվել է »: կետադրական նշանը:	Ընդունվել է
28.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի նոր 26)-րդ,	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածից հանել «**18) 23)-րդ կետում «արտադրանքի,» բառից հետո լրացնել «գործընթացի, ծառայության,» բառերը.**	Ընդունվել է Հիմք ընդունելով «ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013	Ընդունվել է

		27)-րդ և 28)-րդ կետեր	19) **24)-րդ կետում «իրազեկություն՝» բառից հետո լրացնել «նախատեսված արդյունքներին հասնելու համար» բառերը:**» բառերը: Բացի այդ Նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր 26)-րդ, 27)-րդ և 28)-րդ կետերով:	Համապատասխանության գնահատում. Արտադրանքի, գործընթացների և ծառայությունների սերտիֆիկացման մարմիններին ներկայացվող պահանջներ» ստանդարտի պահանջները՝ «համապատասխանության սերտիֆիկատ» հասկացության մեջ «արտադրանքի,» բառից հետո լրացվել է «գործընթացի, ծառայության,» բառերը (Նախագծի 3-րդ հոդվածի 26)-րդ կետ), ինչպես նաև հիմք ընդունելով ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000-2012 «Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ» ստանդարտի պահանջները՝ իրազեկության հասկացությունը շարադրվել է նոր խմբագրությամբ (Նախագծի 3-րդ	

				հոդվածի նոր 28)-րդ կետ): Նախագծի 3-րդ հոդվածը լրացվել է նոր 26)-րդ, 27)-րդ և 28)-րդ կետերով հետևյալ խմբագրությամբ՝ «26) գործունեությանը հետևում՝ ԱՐՄՆԱԲ-ի կողմից հավատարմագրման ոլորտի շրջանակում ՀԳՄ-ի համապատասխանության գնահատման գործունեության հետևում. 27) համապատասխանության սերտիֆիկատ՝ համապատասխանության գնահատման մարմնի կողմից տրված փաստաթուղթ, որը հավաստում է արտադրանքի, գործընթացի, ծառայության, կառավարման համակարգերի, ֆիզիկական անձանց համապատասխանությու	

				նը սահմանված պահանջներին: 28) իրազեկություն՝ նախատեսված արդյունքներին հասնելու համար գիտելիքները և հմտությունները կիրառելու համապատասխան ունակություն.»: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «գործունեությանը հետևում» հասկացությունը ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 ստանդարտի պահանջ է:	
29.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 29-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածի 29)-րդ կետից հանել «20) 24)-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25)-րդ կետով.» բառերը և »: կետադրական նշանը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 3-րդ հոդվածի նոր 29)-րդ կետից հանվել է »: կետադրական նշանը:	Ընդունվել է

30.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի նոր 30-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 3-րդ հոդվածը լրացնել նոր 30)-րդ կետով:	Ընդունվել է Հիմք ընդունելով ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2018 ստանդարտի պահանջը՝ Նախագծի 3-րդ հոդվածի 30-րդ կետով նախատեսվում է հավատարմագրման ոլորտի արդիականացում հասկացությունը. «30) հավատարմագրման ոլորտի արդիականացում՝ ՀԳՄ-ի պահանջով ԱՐՄՆԱԲ-ի կողմից հավատարմագրման փաստաթղթերում փոփոխությունների կատարման գործընթաց, որն իրականացվում է հավատարմագրման ոլորտում վկայակոչված իրավական ակտի, ստանդարտացման, համապատասխանության գնահատման փաստաթղթի փոփոխության, նոր իրավական, ստանդարտացման, համապատասխանության գնահատման	Ընդունվել է

				փաստաթղթի գործողության մեջ մտնելու (եթե նշված փաստաթղթի ներառումը չի ենթադրում հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթաց), հավատարմագրման ոլորտի և կից փաստաթղթերի ձևաչափերի փոփոխության կամ ուղղումների դեպքերում:»:	
31.	ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված և ամբողջ տեքստում	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերում «2)-րդ կետում» և «4)-րդ կետում» բառերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «2-րդ կետում» և «4-րդ կետում» բառերով: Այդ առումով հարկ է նշել, որ նախագծի տեքստում հոդվածների մասերի կետերին տրվող հղումները նշվում են առանց փակագծերի: Նույն դիտողությունը վերաբերում է ամբողջ տեքստին:	Ընդունվել է Հաշվի առնելով այն, որ Նախագծի տեքստում հոդվածների մասերի կետերին տրվող հղումները նշվում են առանց փակագծերի, ուստի նույն տրամաբանությամբ խմբագրվել է Նախագծի ամբողջ տեքստը:	Ընդունվել է
32.	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ և 10-րդ հոդվածներ	Նախագծի 5-րդ և 10-րդ հոդվածները բաղկացած են մեկ համարակալած մասից, ուստի անհրաժեշտ է հանել այդ պարբերության համարակալումը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված	Ընդունվել է

				պահանջները՝ Նախագծի 5-րդ և 10-րդ հոդվածներից հանվել է 1) թիվը:	
33.	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետ	Առաջարկվել է Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետի 5. 5) թվից հետո լրացվել է –րդ: Միաժամանակ Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով լրացվող 5.4)-րդ կետում՝ «Խորհրդի կազմը և» բառերը փոխարինել «Հավատարմագրման խորհրդի կազմը, գործառույթները, լիազորությունները ու» բառերով:	Ընդունվել է Հիմք ընդունելով իրավական որոշակիության սկզբունքը՝ Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով լրացվող 5.4)-րդ կետը խմբագրվել է. «5.4) հաստատում է Հավատարմագրման խորհրդի կազմը, գործառույթները, լիազորություններն ու աշխատակարգը.»:	Ընդունվել է
34.	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 8-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետերին, 12-րդ հոդվածի 4-րդ կետին, 15-րդ հոդվածի 3-րդ կետին, 18-րդ հոդվածին, 19-րդ հոդվածի 4-րդ կետին, 20-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հետևյալ խմբագրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ բովանդակությամբ» բառերով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև 8-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետերին, 12-րդ հոդվածի 4-րդ կետին, 15-րդ հոդվածի 3-րդ կետին, 18-րդ հոդվածին, 19-րդ հոդվածի 4-րդ կետին, 20-րդ հոդվածին:	Ընդունվել է Նախագծի համապատասխան հոդվածներում «հետևյալ խմբագրությամբ» բառերը փոխարինվել են «հետևյալ բովանդակությամբ» բառերով:	Ընդունվել է

35.	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետ	Վերանայել Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 5.5-րդ կետի կարգավորումը՝ այն Սահմանադրության 6-րդ հոդվածի պահանջին համապատասխանեցնելու նպատակով: Միաժամանակ առաջարկվել է Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով լրացվող նոր 5.5) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5.5) հաստատում է հավատարմագրման չափանիշները, ՀԳՄ-ների հավատարմագրման, գնահատումների կարգը և ժամկետները (այսուհետ՝ Կարգ):»:	Ընդունվել է Իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնելու նպատակով Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ կետով լրացվող նոր 5.5) կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «5.5) հաստատում է հավատարմագրման չափանիշները, ՀԳՄ-ների հավատարմագրման, գնահատումների կարգը և ժամկետները (այսուհետ՝ Կարգ):»:	Ընդունվել է
36.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Առաջարկվել է Նախագծի 8-րդ հոդվածում վերանայել Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին նախադասությունը և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հավատարմագրման ազգային մարմնի կրճատ անվանումն է «ԱՐՄՆԱԲ»»:	Ընդունվել է Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին կետը խմբագրվել է և փոփոխության արդյունքում հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 8-րդ հոդվածի կետերի	Ընդունվել է

				համարակալումները փոփոխվել են:	
37.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված 2-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում 11-րդ կետից հետո նոր կետեր լրացնելիս շարունակել կետերի համարակալումը հերթական համարով, այլ ոչ լրացուցիչ:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի 8-րդ հոդվածի 3-ին կետում 11.1)-ից 11.10)-րդ թվերը փոխարինվել են 12)-ից 21)-րդ թվերով:	Ընդունվել է
38.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված 2-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» պարբերությունում «անաչառությունը.» բառից հետո նշված միջակետը հանել:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով սահմանված պահանջները:	Ընդունվել է
39.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 11.5 ենթակետ	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը լրացվում է նոր 11.5 կետով, որով նախատեսվում է ԱՐՄՆԱԲ-ի կողմից հանձնաժողովների ստեղծում, սակայն ստեղծվող հանձնաժողովների գործունեության կարգին վերաբերող կարգավորումներ նախատեսված չեն:	Ընդունվել է Հիմք ընդունելով Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված պահանջը և իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնել ու նպատակով Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետով լրացվող նոր 16-րդ	Ընդունվել է

				ենթակետում «հանձնաժողովներ» բառից հետո լրացվել է «, որոնց գործունեության կարգը սահմանում է ԱՐՄՆԱԲ-ը» բառերը:	
40.	ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածի նոր 4-րդ կետ	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ կետից հետո լրացնել նոր 4-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «4) Լրացնել նոր 5-րդ մասով՝ հետևյալ խմբագրությամբ . «5. Ազգային և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգման ոլորտի շրջանակներում հավատարմագրված ՀԳՄ-ների և դրանց կողմից տրամադրված, գրանցված համապատասխանության գնահատման փաստաթղթերի ռեեստրների վարման կարգերը և չափանիշները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից։»:	Ընդունվել է Հիմք ընդունելով Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված պահանջը և իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնելու նպատակով՝ Նախագծի 8-րդ հոդվածը լրացվել է նոր 4-րդ կետով համապատասխան խմբագրությամբ:	Ընդունվել է
41.	ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ հոդված	Առաջարկվել է Նախագծի 9-րդ հոդվածը լրացնել 1-ին և 2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ. «1) 2-ից-7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել: 2) 8-րդ մասի 3-ից 5-րդ և 8-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել։»:	Ընդունվել է Հիմք ընդունելով իրավական որոշակիության սկզբունքը՝ Նախագծի 9-րդ հոդվածը փոփոխվել է համապատասխան խմբագրությամբ:	Ընդունվել է
42.	ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ կետ	Հստակեցնել Նախագծի 6-րդ և 9-րդ հոդվածներում կատարվող փոփոխությունների արդյունքում նախատեսվող հավատարմագրման խորհրդին վերաբերող կարգավորումները:	Ընդունվել է Հիմք ընդունելով իրավական որոշակիության սկզբունքը և համաձայն Նախագծի 7-րդ	Ընդունվել է

				հոդվածի 3-րդ կետի՝ լիազորված պետական կառավարման մարմինը հաստատում է Հավատարմագրման խորհրդի կազմը, գործառույթները, լիազորություններն ու աշխատակարգը:	
43.	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ կետ Նախագծի 19-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի ամբողջ տեքստում պահպանել դասական թվականների գրության ձևը:	Ընդունվել է Նախագծի ամբողջ տեքստում պահպանվել է դասական թվականների գրության ձևը:	Ընդունվել է
44.	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասից հանվում է տեխնիկական բառը, մինչդեռ Օրենքի 11-րդ հոդվածը վերնագրված է Հավատարմագրման տեխնիկական կոմիտեներ:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «1) վերնագրից և 2-րդ մասից հանել «տեխնիկական» բառը:»: Փոփոխության արդյունքում Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը փոփոխվել են:	Ընդունվել է

45.	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նախատեսվող կարգավորումը հստակեցման անհրաժեշտություն ունի: Առաջարկվել է Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ կետում «**2-րդ մասի 3)-րդ կետում «ընդլայնելու կամ կրճատելու, ինչպես նաև կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ որոշումներ» բառերը փոխարինել «** » բառերը փոխարինել « «**2) ընդունում է հավատարմագրման, հավատարմագրումը մերժելու,**» բառերով: Միաժամանակ պարզաբանման կարիք ունի, թե ինչու է առանձնացվում «հավատարմագրման պայմանագրի լուծման դեպքում ընդունում է հավատարմագրումը **դադարեցնելու** վերաբերյալ որոշում» դրույթը, քանի որ այն ըստ էության կրկնում է նույն կետում արդեն իսկ նշված **հավատարմագրումը դադարեցնելու** մասին պահանջը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը է շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «2) ընդունում է հավատարմագրման, հավատարմագրումը մերժելու, ընդլայնելու, կրճատելու, պահպանելու, կասեցնելու, վերականգնելու, դադարեցնելու, վերահավատարմագրելու վերաբերյալ որոշումներ:»:	Ընդունվել է
46.	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ կետ	Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ կետով՝ Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր 4-րդ կետով նախատեսվող կարգավորումը հստակեցման անհրաժեշտություն ունի:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի 11-րդ հոդվածի 4-րդ կետը հստակեցվել է. հանվել է «2-րդ մասը լրացնել նոր	Ընդունվել է

				4-րդ կետով՝ հետևյալ խմբագրությամբ. «4) ՀԳՄ-ի կողմից հավատարմագրման կրճատման, կասեցման կամ դադարեցման դիմումի ներկայացման դեպքում հավատարմագրման կարգով սահմանված ժամկետում ընդունում է համապատասխան որոշում:»» Նախատեսված իրավակարգավորումը և խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «4) 2-րդ մասի 3)-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:»:	
47.	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին կետ	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին կետից հանել «(կալիբրավորման)» բառը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին կետից հանվել է«(կալիբրավորման)» բառը:	Ընդունվել է
48.	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ կետ	Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ կետով լրացվող 5.3) կետում «համադրում» բառը փոխարինել «ստուգում» բառով	Ընդունվել է Հիմք ընդունելով ԻՍՕ/ԻԷԿ 17029:2019	Ընդունվել է

				միջազգային ստանդով սահմանված պահանջը՝ «համադրում» բառը փոխարինվել է «ստուգում» բառով: Նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ կետում:	
49.	ՀՀ կառավարություն	Նախագծի 13-րդ հոդված	Նախագծի 13-րդ հոդվածով՝ Օրենքի 13-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում հոդվածի վերնագրի վերջում դրված միջակետը հանել:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ հանվել է միջակետը:	Ընդունվել է
50.	ՀՀ կառավարություն	Նախագծի 14-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր 13.1-ին հոդվածով նախատեսված իրավակարգավորումները հստակեցման անհրաժեշտություն ունեն:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի 14-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր 13.1-ին հոդվածով նախատեսված բոլոր իրավակարգավորումները հանվել են, որի արդյունքում Նախագծի հոդվածների համարակալումները փոփոխվել են:	Ընդունվել է

51.	ՀՀ կառավարություն	Նախագծի 15-րդ հոդված, 16-րդ հոդված, 17-րդ հոդված, 18-րդ հոդված, 19-րդ հոդված	Նախագծի «Հոդված 15.» բառերը փոխարինել «Հոդված 14.» բառերով: Նախագծի «Հոդված 16.» բառերը փոխարինել «Հոդված 15.» բառերով: Նախագծի «Հոդված 17.» բառերը փոխարինել «Հոդված 16.» բառերով: Նախագծի «Հոդված 18.» բառերը փոխարինել «Հոդված 17.» բառերով: Նախագծի «Հոդված 19.» բառերը փոխարինել «Հոդված 18.» բառերով:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի հոդվածների համարակալումները փոփոխվել են:	Ընդունվել է
52.	ՀՀ կառավարություն	Նախագծի 14-րդ հոդված	Նախագծի 14-րդ հոդվածում «կարգով» բառը փոխարինել «Կարգով»:	Ընդունվել է Հիմք է ընդունվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը:	Ընդունվել է
53.	ՀՀ կառավարություն	Նախագծի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի 17-րդ հոդվածի վերնագիրը և 2-րդ մասը շարադրվում են նոր խմբագրությամբ, իսկ 1-ին մասն ուժը կորցրած է ճանաչվում: Այդ առումով կարծում ենք, որ Օրենքի 17-րդ հոդվածն անհրաժեշտ է ներկայացնել նոր խմբագրությամբ:	Ընդունվել է Նախագծի 17-րդ հոդվածը շարադրվել է նոր հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 17. Հավատարմագրման նշանի և հավատարմագրման	Ընդունվել է

				վերաբերյալ տեքստային վկայակոչման կիրառման սահմանափակումը» 1. Արգելվում է չհավատարմագրված, հավատարմագրումը դադարեցված կամ կասեցված ոլորտի շրջանակում ՀԳՄ-ների կողմից համապատասխանության գնահատման գործունեության իրականացումը՝ կիրառելով հավատարմագրման նշանը և հավատարմագրման վերաբերյալ տեքստային վկայակոչումը:»:	
54.	ՀՀ կառավարություն	Նախագծի 18-րդ հոդված	Նախագծի 18-րդ հոդվածով Օրենքում 17.1-ին հոդված լրացնելիս պահպանել օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հասկացությունների կիրառման կանոնները: Առաջարկվել է Նախագծի 18-րդ հոդվածի վերնագրի փոփոխություն և նույն հոդվածում հավատարմագրման կրճատման հիմքերի սահմանում:	Ընդունվել է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հասկացությունների կիրառման կանոնները պահպանելու նպատակով, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի նոր 18-	Ընդունվել է

				որդ հոդվածի վերնագիրը վերանայվել է և նույն հոդվածի 1-ին կետով նախատեսվել են հավատարմագրման կրճատման հիմքերը՝ հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 17.1. Հավատարմագրման կրճատումը, լրիվ կամ մասնակի կասեցումը, դադարեցումը. 1.Հավատարմագրման կրճատման հիմք է հանդիսանում՝ 1) ՀԳՄ-ի դիմումը, 2) Կարգով սահմանված դեպքերում գնահատումների ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունները»:	
55.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ Նախագծի նոր 18-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետ	Նախագծի նոր 18-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «պարբերական, արտահերթ գնահատման, գործունեությանը հետևելու» բառերը փոխարինել «գնահատումների» բառով, իսկ «հավատարմագրման կարգով» բառերը փոխարինել «Կարգով» բառով:	Ընդունվել է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հասկացությունների կիրառման կանոնները պահպանելու նպատակով Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր	Ընդունվել է

				2-րդ մասի 2-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «2) գնահատումների ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունները Կարգով սահմանված ժամկետներում չվերացնելը,»: Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 6-րդ մասի 3-րդ կետը խմբագրվել է:	
56.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ	Վերանայել Նախագծի նոր 18-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր 17.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի կարգավորումը՝ այն իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնելու նպատակով: Միաժամանակ առաջարկվել է Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հավատարմագրման կարգով» բառերը փոխարինել «Կարգով» բառով:	Ընդունվել է Իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնելու նպատակով Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 2-րդ մասի 3-րդ կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «3. համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնելիս ՀԳՄ-ների՝ Կարգով սահմանված հավատարմագրման	Ընդունվել է

				չափանիշներին անհամապատասխանությունը,»:	
57.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 3-րդ մաս	Վերանայել Նախագծի 18-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի 2-րդ մասի կարգավորումը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 3-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.« Հավատարմագրման կասեցման ժամանակահատվածում ՀԳՄ-ը չի կարող ներկայացնել հավատարմագրման ընդլայնման, ինչպես նաև վերահավատարմագրման հայտ:», ինչի արդյունքում հանվել է «կամ հավատարմագրման պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքում» բառերը:	Ընդունվել է
58.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 4-րդ և 5-րդ մասեր	Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 4-րդ և 5-րդ մասերում «1-ին» թիվը փոխարինել «2-րդ» թվով:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական	Ընդունվել է

				ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածը՝ Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 4-րդ և 5-րդ մասերում կատարվել է համապատասխան փոփոխությունը:	
59.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 5-րդ մաս	Նախագծի 18-րդ հոդվածով լրացվող 17.1 հոդվածի 5-րդ մասում սահմանվում է, որ հավատարմագրման կասեցման ժամկետը սահմանվում է ոչ ավելի, քան 4 ամիս: Այդ առումով անհրաժեշտ է հստակեցնել, որ օրից սկսած է ժամկետը հաշվարկվում:	Ընդունվել է Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 5-րդ մասում հավատարմագրման կասեցման ժամկետը սահմանվել է հավատարմագրման կոմիտեի կողմից համապատասխան որոշման կայացմանը հաջորդող օրվանից ոչ ավելի, քան 4 ամիս:	Ընդունվել է
60.	ՀՀ կառավարություն	Նախագծի 18-րդ հոդվածի նոր 6-րդ մասի 2-րդ կետ	Նախագծի 19-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում «3-րդ» թիվը փոխարինել «4-րդ» թվով, հանել «կարգով» բառը, իսկ «դիմում» բառը փոխարինել «դիմումը» բառով: Նույն հոդվածի նույն մասում «4-րդ» թիվը փոխարինել «5-րդ» թվով և հանել «նախատեսված կարգով» բառերը:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 6-րդ մասի 2-րդ կետը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «2) սույն օրենքի 17.1-ին հոդվածի 4-րդ մասով	Ընդունվել է

				նախատեսված դիմումը չներկայացնելու կամ հավատարմագրման կասեցման հիմքերը նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում,»:	
61.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 18-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասեր	Վերանայել Նախագծի 19-րդ հոդվածով՝ Օրենքում լրացվող նոր՝ 17.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված կարգավորումները:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի նոր 18-րդ հոդվածի նոր 7-րդ մասը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ. «7. Գնահատումների ժամանակ արձանագրված անհամապատասխանությունների արդյունքում հավատարմագրման դադարեցման կամ կրճատման վերաբերյալ որոշման ընդունման դեպքում ՀԳՄ-ն կարող է հավատարմագրման կամ հավատարմագրման ընդլայնման հայտը ներկայացնել համապատասխան	Ընդունվել է

				որոշումը ընդունելուց առնվազն վեց ամիս հետո՝ անհամապատասխանությունները վերացնելու դեպքում:»:	
62.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 19-րդ հոդված	Օրենքի 18-րդ հոդվածն ամբողջությամբ փոփոխվում է, ուստի առաջարկվում է, որ 18-րդ հոդվածը ներկայացնել նոր խմբագրությամբ:	Ընդունվել է Օրենքի 18-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ. «1. ԱՐՄՆԱԲ-ը անդամակցում և համագործակցում է տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ, մասնակցում է նրանց գործունեությանը և համաձայնագրերի շնորհիվ ձեռք է բերում տրված հավատարմագրումների ճանաչում: 2. ԱՐՄՆԱԲ-ը տրված հավատարմագրումների ու հավատարմագրված ՀԳՄ-ների գործունեության արդյունքների ճանաչման համար կարող է դիմել տարածաշրջանային և	Ընդունվել է

				միջազգային հավատարմագրման կազմակերպությունների բազմակողմ համաձայնագրեր ստորագրող կողմ դառնալու համար, ինչն իր հերթին ենթադրում է հավասարության սկզբունքներով փոխադարձ գնահատում: 3. Բազմակողմ համաձայնագրեր կնքելու դեպքում ԱՐՄՆԱԲ-ը ճանաչում է հավատարմագրման միջազգային և տարածաշրջանային բազմակողմ համաձայնագրեր կնքած կողմերից տրված հավատարմագրումները: »:	
63.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 20-րդ հոդված	Առաջարկվել է Նախագծի նոր 20-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները վերանայել:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի նոր 20-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը հանվել են:	Ընդունվել է

				Նախագծի նոր 20-րդ հոդվածով Օրենքի 19-րդ հոդվածը լրացվել է նոր 3-րդ և 4-րդ մասերով՝ հետևյալ խմբագրությամբ. ««3. Օտարերկրյա հավատարմագրման ազգային մարմնի կողմից հավատարմագրված ՀԳՄ-ների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում արգելվում է, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ընդունված փաստաթղթերով: 4. ԱՐՄՆԱԲ-ը չպետք է մրցակցի այլ պետությունների	

				հավատարմագրման մարմինների հետ:»:	
64.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 23-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 23-րդ հոդվածի 2-րդ կետի փոփոխության արդյունքում ստացվում է, որ հավատարմագրման ազգային մարմնի ֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ՝ օրենքով և **հավատարմագրման միջազգային ստանդարտներով չարգելված գործունեությունից ստացված** այլ միջոցներ: Այդ առումով հստակեցման կարիք ունի, թե որոնք են «չարգելված գործունեությունից» ստացված միջոցները:	Ընդունվել է Նախագծի նոր 23-րդ հոդվածի 2-րդ կետի նոր խմբագրությամբ հանվել են «**հավատարմագրման միջազգային ստանդարտներով չարգելված գործունեությունից ստացված** այլ միջոցներ» բառերը:	Ընդունվել է
65.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 23-րդ հոդվածի 3-րդ կետ	Նախագծի նոր 23-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգավորումը համահունչ չէ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պահանջներին:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ Նախագծի նոր 23-րդ հոդվածի 3-րդ կետը հանվել է: Փոփոխության արդյունքում Նախագծի նոր 23-րդ հոդվածի կետերի համարակալումները փոփոխվել են:	Ընդունվել է

66.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 24-րդ և 25-րդ հոդվածներ	Նախագծի նոր 24-րդ և 25-րդ հոդվածների վերնագրերը հանել:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի նոր 24-րդ և 25-րդ հոդվածների վերնագրերը հանվել են:	Ընդունվել է
67.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 25-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի նոր 25-րդ հոդվածի 1-ին մասով ՀԳՄ-ների համար անցումային շրջան 12 ամիս նախատեսելուն զուգահեռ անհրաժեշտ է հստակ և որոշակի նախատեսել նաև այդ ժամանակահատվածում որոշակի շրջանակ կազմող համապատասխանության գնահատման մարմինների համար այլ նորմեր:	Ընդունվել է Նախագծի նոր 25-րդ հոդվածի 1-ին մասը հանվել է:	Ընդունվել է
68.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 25-րդ հոդված	Նախագծի նոր 25-րդ հոդվածով նախատեսված անցումային դրույթների կիրառումն ապահովելու նպատակով հստակեցնել դրանցում կատարված հղումները:	Ընդունվել է Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Նախագծի 25-րդ հոդվածը ամբողջությամբ վերանայվել է՝ հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 25. 1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում լիազորված	Ընդունվել է

				պետական կառավարման մարմինը հաստատում Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր՝ 5.2-5.5-րդ կետերով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը: 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է սույն Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետով Օրենքի 8-րդ հոդվածում լրացվող նոր՝ 5-րդ մասով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը:»:	